Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2020: «Հեռավոր հայկական համայնքներում ՍՏԵՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) կրթության մշակույթի և միջավայրի հիմնման և արդիականացման» ծրագրի եզրափակիչ արարողություն

2022թ. հոկտեմբերի 4-ին Արշալույս համայնքի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ «Հեռավոր հայկական համայնքներում ՍՏԵՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) կրթության մշակույթի և միջավայրի հիմնման և արդիականացման» մինչև 60,985 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Արմավիրի մարզպետ պարոն Էդուարդ Հովհաննիսյանը, «Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի հիմնադիր և ղեկավար տիկին Լարիսա Հովհաննիսյանը, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակիցներ, դպրոցի տնօրենը և այլ շահառուներ:

Ծրագրի նպատակն է եղել վերանորոգել Արմավիրի, Արագածոտնի, Լոռու և Տավուշի մարզերի հեռավոր շրջաններում գտնվող թիրախային 4 միջնակարգ դպրոցները և հիմնել լաբորատորիաներ, ինչպես նաև ապահովել վերջիններիս համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները բնագիտական առարկաների պրակտիկ դասընթացներն իրականացնելու նպատակով:

Արդյունքում ծրագրի դպրոցների շուրջ 610 աշակերտ և ուսուցիչ կշահի այս ծրագրից, ստանալով որակյալ կրթության հնարավորություն ՍՏԵՄ-ի ոլորտում, որն իր հերթին կաջակցի տարածաշրջանում արդյունաբերական և տնտեսական զարգացմանը:

Լաբորատորիայի բացման արարողությունը

ՍՏԵՄ դասասենյակի սարքավորումները

Սարքավորումների ներկայացումը՝ աշակերտների կողմից

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը